Անվանաթերթը պատռված է, կարդացվում է մի մասը՝ Սաղմոս Երջանիկ Մարգարէին Դաւթի: ...Տպագրեցեալ... Հայրապետութեան Տեառն Խաչատուր Սրբազան Կաթողիկոսին Ամենայն Հայոց: Ի թուականիս (1207) Յունվարի, ժ: Հիշատակարանում կարդում ենք. «...յիշեսջիք ի քրիստոս զհանգուցեալ հայրն իմ զաստուածատուր. ընդ նմին և զիս զորդի նորին՝ զյոհաննէս յետնեալ դպիրս»: Սաղմոսի այս տպագրությունը ամեն ինչով նման է 1776-ին նույն տպարանից դուրս եկած Սաղմոսին (հաջորդ նկարագր.):

11. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ: Կ. Պոլիս, տպ. Հովհաննես Աստվածատրյանի, 1776, 377 (7 չ հ.) զարդափակ էջ, պատկերներ, զարդեր: Մատենադարան, № 1324.

Մատենադարանի միակ օրինակում տիտղոսաթերթի մի մասը պատռված է, բայց պահպանվել է՝ Ի թուականիս 1225 Յունվարի, ժ: Ի Տպարանի Աստուածատուրի: 377—383 էջերում հիշատակարան, ուր՝ «յիշեսջիք ի քրիստոս զհանգուցեալ հայրն իմ զաստուածատուր. ընդ նմին զիս զորդի նորին՝ զյոհաննէս յետնեալ դպիրս»:

12. ՏՕՆԱՑՈՅՑ. Կ. Պոլիս, տպ. Հովհաննես և Պողոս Աստվածատր., 1785. 389, 47 (1 չ հ.) զարդափակ էջ, պատկերներ, զարդեր: Հանրային գրադարան, № 758, 311, Պատմության թանգարան, № 301, Մատենադարան, № 69, 70:

Անվանաթերթն սկսվում է. Գիրք որ կոչի Տօնացոյց Կարգաւորութիւն և հրահանգ Տէրունական Տօնից, վերջանում է. Ի Թուին Հայոց ռմլդ. և յօգոստոսի ժա: Ի Տպարանի յոհաննիսի և պօղոսի:

Տոնացույցը հասնում է մինչև 387 էջը, 388—389՝ հիշատակարան, ապա նոր էջակալությամբ սկսվում է առանց վերնագրի. «Եւ ասա առ ի կատարիլ Տօնացուցիս...» մինչև վերջ: Հիշատակարանում կարդում ենք. «Աթոռակալք. և առ հասարակ քահանայք. նաև իշխանապետք. իշխանք և առ հասարակ ժողովուրդք. միահամուռ ամենեքեանքս հաւանութեամբ միմեանց. խնդիր արարեալ ի ներկայ եղեալ աղգասէր Պատրիարգէ, վասն վերստին տպեցուցման հին տօնացուցիս. Որս հրամանաւն եղև տրպեալ ըստ յառաջագոյն տպագրեալ օրինակացն...»:

13. Եփրեմ Խուրի ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ: Կ. Պոլիս, տպ. Հովհաննես և Պողոս Աստվածատր. (Արապյանի), 1793. 112 զարդափակ էջ, անվանաթերթի դարձերեսին Եփրեմի պատկերը, զարդեր: Մատենադարան, № 607, Հանրային գրադարան, № 111:

Անվանաթերթը սկսվում է. Գիրք աղօթից: Ասացեալ Սրբոյն Եփրեմի Խուրոյն Ասորւոյ, վերջում՝ Ի թուին Հայոց ՌԲՃԽԲ Հոկ ԻԴ: Ի Տպարանի Յոհաննիսեան Պողոսի: էջ 110—112 հիշատակարան, ուր ասված է. «յիշեսջիք ի մաքուր մաղթանս ձեր զհանգուցեալ հայրն իմ զաստուածատուր. և զիս զորդի նորին զյոհաննէս. հանդերձ յոգնաշխատ որդւովն իմով տիրացու պօղոսիւ և զյարութիւնիւ զգիրս կապարեայս շարողիս»:

14. ԺԱՄԱԳԻՐՔ: Կ. Պոլիս, տպ. Հովհաննես և Պողոս Աստվածատր., 1793, 608 զարդափակ էջ, պատկերներ, զարդեր: Հանրային գրադարան, № 957:

Անվանաթերթի վերջում՝ «Ի թուին Հայոց ՌԲՃԽԲ փետր. ԻԸ ի տպարանի Յոհաննիսեան Պողոսի»: Հիշատակարանը 608 էջում նման նախորդին:

15. ՇԱՐԱԿՆՈՑ: Կ. Պոլիս, տպ. Պողոս Աստվածատր. (Արապյանի), 1794. 555 (3 չ հ.) երկսյուն, զարդափակ էջ: Անվանաթերթը պատկերազարդ